

«Պարսկաստան անող կամ շինուող որեւէ տեսակ ապրանքի համար (բացի Քիրմանի կարմիր բուրդէ, որ այստեղ բոլորովին արգիւրուած է) հարիւրին տասը, արտօնութեան եւ նոյն նաւողչէքը, որ Ընկերութիւնը ինքը կը վճարէ, առանց որեւէ ուրիշ վճարման: Ամէն տեսակ Չինական եւ Պէնկալի ապրանքներ Ընկերութեան այս ապրանքները ըստանալու առեն միայն, եւ ոչ այլ առեն, ուր որ բեռցուած ըլլան, տասներեք առ հարիւր, արտօնութեան եւ ամէն տեսակ ուրիշ վճարմանց համար, ինչ որ ալ ըլլան, Ընկերութեան վճարած եւ ամէն տեսակ ուրիշ վճարմանց համար, ինչ որ ալ ըլլան, Ընկերութեան վճարած բեռագիրնէն, վեր եւ դուրս, եւ մաքսէն դատ, որ ասկէ վերջ կը յիշուի: Բոլոր ապրանքները, ներս բերուող եւ դուրս տարուող, Արեւելեան Հնդկաց Ընկերութեան պիտի վճարեն հարիւրին հինգ, մաքս առաջին արժէքին վրայ ըստ այդ ապրանքներուն հաշուեցոյցին, եթէ անոնք բեռցուած են կամ ուղարկուած Ընկերութեան որեւէ մէկ նաւահանգիստէն կամ վայրէն, կամ ուրիշ որեւէ նաւահանգիստէ կամ վայրէ: Բացառութիւն պիտի կաղմեն այս յօդուածէն ճոյլ իրերը, աղամանղները, եւ ուրիշ թանկագին քարեր, սաթ, մուշկ եւ Պարսկական հում մետաքս: Եւ համաձայնուած է, որ արտօնութեան դրամը եւ նաւողչէքը բոլոր դուրս դրկուած ապրանքներուն համար պիտի վճարուի Հնդկաստանի մէջ նախապէս ըստանալին համաձայն հաշուուելով ութն ու կէս, բուրի իւրաքանչիւր արծաթ փառուտի համար յանձնելի ապրանքներուն Ընկերութեան ի Լոնտոն:

«Եւ մենք կը ծանուցանենք, որ հաշիւներու դիւրութեան համար Ընկերութեան ի Արեւելեան Հնդկաստան վճարելի մաքսը պիտի միացուի ուրիշ դանձելի պահանջներու հետ, որպէս բեռագիրն եւ արտօնութեան համար ըստ առաջարկութեանց եւ ամէնը դեռագուած մէկ դումարի մէջ, իրենց յատուկ բեռագիրերու վրայ եւ այդ դումարը միշտ պիտի վճարուի նախ քան ապրանքներուն յանձնումը յիշեալ բեռագրին մէջ յիշուած անձին, որ ճիշդ նպա-

տակն է նախապէս արտայայտուած դրաւականին:

«Բոլոր այն ապրանքներուն կամ, որոնց համար անդամ մը մաքս վճարած են, դարձեալ չպիտի վճարեն, արտածման թէ ներածման առտեն նոյն ապրանքին համար այն վայրին, ուր նախապէս վճարած են կամ որեւէ ուրիշ նաւահանգիստի կամ վայրի մէջ, որ մեզի կը պատկանի Արեւելեան Հնդկաստանի մէջ:

«Այն անձը, որ կը ճամբորդէ Ընկերութեան որեւէ մէկ նաւին վրայ, պիտի վճարէ Արեւելեան Հնդկաստանի մէջ տասներկու արծաթ փառուտ իր արտօնութեան համար, իւրաքանչիւր արծաթ փառուտի համար ութ ու կէս բուրի սակով: Նոյն դումարը պիտի վճարուի եւ անոնց կողմէ, որոնք տուն կը վերադառնան, բացի իւրաքանչիւր անձի ութը փառուտ վճարումէն ծովուտեստի համար, որ ըստ այս համաձայնութեան միշտ պիտի վճարուի ի Լոնտոն: Եւ այսպէս անձեր, որոնք նաւապետի սեղանին կը ճաշեն, նաւապետին պիտի վճարեն տասը կիւնի (Անգլիական դրամ) ատոր համար: Բայց ծառաները պիտի կերակրուին առանձին իրենք իրենցմով, եւ միշտ նոյն ուտեստաշար պիտի ստանան, որ կը տրուին նաւուն պաշտօնեաներուն եւ նաւաղներուն:

«Նաեւ յիշեալ հայերուն կը շնորհուի (որոնց նաւաղնացութիւնը պիտի արտօնուի, թէ դուրս եւ թէ դէպի տուն) իրաւունք կրելու իրենց հետ իրենց հայրենի տարազները, կարասին եւ ուտեստը, իւրաքանչիւր անձի քառորդ թընէ աւելի չանցնելու պայմանաւ: Եւ Հայերը, որոնք մեծ առեւտուր կ'ընէին Հընդկաստանէն Թուրքիա ցամաքով, Պարսկաստանի եւ Արարիոյ վրայով եւ այժմ կը ցանկան այդ ամբողջ առեւտուրը ընել Անգլիոյ ճանապարհով, ազատ են զրկելու Ընկերութեան որեւէ մէկ նաւին վրայ դէպի Անգլիա ոեւէ տեսակ Արեւելեան Հնդկաստանի ապրանք, յանձնելով Ընկերութեան ճիշդ հաշուեցուցակներով եւ բեռագիրներով, եւ ոչ այլապէս, վճարելով հարիւրին տասը արտօնուած այդ ապրանքին Լոնտոնի մէջ ունեցած արժէքին վրայ: Եւ աստ կը յայտարարուի, որ Ընկերութիւնը ազատ է